«Պռոլաբ» ՍՊԸ, Հեռ.՝ 099-99-17-35

Էլ.հասցե՝ prolabarmenia@gmail.com

Տ-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (Տ-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

Բացատրագիր և ամփոփագրեր

«ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
"PROMETEY" LLC
EXPERTISE
02847013

Կատարող՝ «Պռոլաբ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ԵՐԵՎԱՆ 2025

S-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (S-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

Բացատրագիր

Ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի /Թիվ ՆԹ-0012-25 առ 07.01.2025թ/ ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի և ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախատեսված է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհի հիմնանորոգում պահպանելով գոյություն ունեցող հարաչափերը:

Տեղանքում իրականացվել է գոյություն ունեցող վիճակի ակնադիտական ուսումնասիրություն, Գեոդեզիական հանույթ GPS սարքով, դրոնային նկարահանում և երկրաբանական հորատում ու ուսումնասիրություն:

Տեղում կատարված ուսումնասիրության ընթացում պարզ երևում էր, որ ակնհայտ առկա են նստվածքային տեղամասեր, կողահանումներ և փոսեր: Գոյություն ունեցող ճանապարհը և դրան հարող դաշտերը գտնվում են գրեթե նույն մակարդակի, իսկ կողային առուները գրեթե բացակայում են: Համաձայն երկրաբանական ուսումնասիրության տեղում գոյություն ունեցող գրունտները կավային գրունտներ են՝ մասնակի փոշենման, բարձր ծակոտկենությամբ և միջին (ցուցանիշը ավելի մոտ է ուժեղ դեֆորմացիայի սահմանին՝ 5-10ՄՊա) դեֆորմացիոն մոդուլով՝ ըստ երկրաբանական եզրակացության 15ՄՊա, որը ավելի քան մոտենում է ուժեղ դեֆորմացիոն մոդուլին քան միջին դեֆորմացիոն մոդուլին: Հաշվի է առնվել նաև գրունտի շահագործման պայմանը և չնախատեսված մակերևույթային և ստորգետնյան ջրերի առկայությունը ու ներթափանցումը:

Հաշվի առնելով տվյալ ճանապարհի բեռնվածությունը և դաշտերի ոռոգման հանգամանքը, նախագծով նախատեսված է իրականցնել գոյություն ունեցող հիմնատակի բարելավում՝ 40% պարունակության 40-70մմ և 70-120մմ ֆրակցիայի խճով: Նման հիմքի կիրառման անհրաժեշտությունը առաջացել է հարակից դաշտերի ոռոգման սեզոնին ջրերի ներթափանցումը կավային գրունտի մեջ, որը կբերի գոյություն ունեցող կավային գրունտի ֆիզիկոմեխանիկական հատկությունների փոփոխության՝ կապված փոշենման մասնիկների լվացմամբ: Նման հիմքի կիրառման դեպքում բարձրացվել է հիմնատակի կրողունակությունը՝ առաձգականության մոդուլը:

Բացի վերը նշված ուսումնասիրությունից, նախագծային կազմակերպության մասնագետները համագործակցել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ինտենսիվության տվյալների ձեռքբերում և կոմունիկացիաների հաստատում:

Նախագծային աշխատանքների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀՇՆ 32-01-2022թ նորմատիվային պահանջները:

Ճանապարհային պատվածքի հաշվարկի համար հիմք է հանդիսացել երկրաբանակա եզրակացությունը և համայքի կողմից տրված ինտենսիվության վերաբերյալ գրությունները: Ճանապարհային պատվածքի համար գրությամբ դիմվել է Պատվիրատուին: Սակայն Պատվիրատուի կողմից պատասխանվել է, որ տվյալ ճանապարհի համար ինտենսիվության տվյալներ չկան: Նախագծային կազմակերպությունը իրականացրել է ինտենսիվության չափումներ առավոտյան 8:30-ից մինչև 10:30, կեսօրին 13:00-ից 15:00 և երեկոյան 18:00-ից մինչև

20:00: Հարկ ենք համարում ավելացնել, որ կազմակերպության կողմից իրականացված չափումները /5 օր/ միանշանակ չեն կարող հիմք ընդունվել ամբողջ տարվա կտրվածքի համար: Այդ իսկ պատճառով համայնքների ղեկավարների հետ համագործակցելով նախագծային կազմակերպությանը տրամադրվեց սեզոնային բերքահավաքի և հողի մշակման ժամանակ ինտենսիվության տվյալները: Հիմք է ընդունվել այդ տվյալները և դրանք բաշխվել է ամբողջ տարվա միջին օրական ինտենսիվությամբ:

Համաձայն ներկայացված ինտենսիվության պահանջների և երկրաբանական տվյալների ճանապարհի պահանջվող պատվածքի հաստությունը ընտրվել է.

1	Ավազակոպճային շերտ 15սմ ԳՕՍՏ 23735-2014
2	Խճային հիմք C5 27սմ ԳՕՍՏ 25607-2009
3	Բիտումային շերտի տարածում 1քմ -0.3լ
4	Խոշորհատիկ տաք խիտ ա/բ 6սմ ԳՕՍՏ 9128-2013 ՏԻՊ "Բ" II մակնիշի
5	Մանրահատիկ տաք խիտ ա/բն 4սմ ԳՕՍՏ 9128-2013 ՏԻՊ "Բ" II մակնիշի

Հաշվի առնելով, որ գոյություն ունեցող ճանապարհի հիմնատակում առկա են կավային գրունտներ, իսկ տվյալ ճանապարհը բավականին ինտեսիվ է, ուստի ճանապարհային պատվածքի հիմնատակում նախատեսվում է իրականացնել գեոտեքստիլ 300գր/քմ բնութագրով:Սույն լուծումը կապահովի ճանապարհի շահագործման /Life line/ երկար ժամանակով շահագործումը:

Մայթեր

Մայթեր նախատեսված է իրականացնել միայն բնակելի գոտում: Մայթի պատվածքը նախատեսված է իրականանցել բետոնե սալիկներից:

1	Ավազակոպճային շերտ 12սմ ԳՕՍՏ 23735-2014
2	Խճային հիմք C5 15սմ ԳՕՍՏ 25607-2009
3	Ց/ավազային հարթեցնող շերտ 3սմ հաստությամբ
4	Բետոնե սալիկներ 6սմ հաստությամբ

Անձրևաջրերի մակերևութային հոսքի հատուկ դեպքը

Մակերևութային հոսքը իրենից ներկայացնում է անձրևաջրերի հոսք մակերևույթին կամ գրունտի և Շինհրապարակների այլ տեխնիկական մակերեսների վրայով: Մակերևութային հոսքը համարվում է կեղտաջուր՝ եթե այլ կերպ Կապալառուի կողմից փաստաթղթերի և հիմնավորումների միջոցով ներկայացված չէ և Ինժեների կողմից հաստատված չէ: Բոլոր հարթակները, որտեղ տեղադրված են գեներատորները, ածխաջրածինների պահեստավորման տարողությունները և վերալիցքավորման կայանները, ունեն անջրթափանց մակերեսներ, ապահովված են դրենաժով և սարքավորված են յուղի հեռացնելու համար մաքրման համակարգով՝ աղտոտումը կանխելու նպատակով: Բետոնե հարթակների դեպքում մակերևութային հոսքը կհեռացվի դեպի նստեցման ավազան, որտեղ pH-ը կկարգավորվի բուֆերային լուծույթի միջոցով:

Ինժեներական ցանցեր

Ինժեներական ցանցերի համար նախագծային կազմակերպությունը ձեռք է բերել համապատասխան համաձայնեցումներ շահագրգիռ կազմակերպությունների կողմից: Համաձայն ներկանացված նախագծով և շահագրգիռ կազմակերպությունների հաստատումների ներկայումս չենք խանգարում գոյություն ունեցող ինժեներական կոմունիկացիաներին: Սակայն առաջնորդվելով «Ճանապարհների մասին օրենքով»՝ այն հատվածներում որտեղ ճանապարհի կառուցման աշխատանքներին կխանգարեն գոյություն ունեցող կոմունիկացիաները, ապա այդ հատվածներում դրանց տեղափոխությունները կիրականցվի սեփականտիրոջ միջոցներով: Աշխատանքները սկսելուց առաջ նախապես պայմանավորվել սեփականատերերի հետ /Վեղաջուր, Գազպրոմ, ՀԷՑ և ջրօգտագործողների միություն/: Այն լրացուցիչ խողովակները որոնք հայտանբերված չեն լինի ուսումնասիրության ժամանակ կամ տրված չեն լինի շահագրգիռ կազմակերպությունների կողմից, ապա դրանց ապամոնտաժումը, տեղափոխումը կամ վերատեղադրումը կիրականցվի լրացուցիչ ակտով ստորագրված Պատվիրատուի, Կապալառուի տեխնիկական հսկողի և հեղինակային հսկողի կողմից: Նման աշխատանքների ավելացումը չի դիտարկվի որպես նախագծային թերություն և դրանք կիրականացվել չնախատեսված գումարների շրջանակներում:

Գոյություն ունեցող ոռոգման ցանց

Անվտանգ մուտքեր

Շինարարության գծով կապալառուն պատասխանատու է անվտանգ աշխատանքային տեղի ապահովման ինչպես նաև շինհրապարակներ՝ անվտանգ մուտքի և ելքի պահպանման համար: Ընդհանրապես Շինարարության գծով Կապալառուն պետք է.

- Վստահ լինել որ համապատասխան զգուշացման նշանները տեղադրված են և հիմնական լուսավորությունը ապահովված է:
- Ապահովել աստիճաններ, սանդուղքներ, իջատեղեր և շինհրապարակի ելքի համար այլ անվտանգ միջոցներ ինչպիսին են աշխատանքային հարթակները:
- Ելքի միջոցները տեղադրել աշխատողներիվ համապատասխան հեռավորության վրա:
- Օգտագործել իրազեկ անձի կողմից նախագցված կառուցվածքային Իջատեղեր միայն հանույթներ մտնելու և դուրս գալու համար: Իջատեղերի մոտ չի թույլատրվում կառուցել 6%-ից ավել թեքություններով հարթակներ: Նման խնդիրներ առաջանալու դեպքում տեղադրել աստիճանները բազրիքներով: Աստիճանների լայնությունը չպետք է փոքր լինի քան 1մ-ը:
- Վստահ լինել որ իջատեղ կազմող երկու կամ ավելի մասնիկներ իրար միացված են տեղաշարժը կանխելու համար:
- Կազմակերպել համապատասխան լայնության իջատեղեր և հարթակներ և սարքավորել դրանք պաշտպանական արգելափակոցներով որտեղ որ կիրառելի է:

Անձնական պաշտպանիչ միջոցներ

Շինարարական տեղամասում բոլոր աշխատողները /ներառյալ տեղական ժամանակավոր աշխատույժը/ պետք է ապահովվեն և օգտագործեն ԱՊՄ: Անձնական պաշտպանիչ միջոցները օգտագործվում են հաղթահարելու վտանգների ենթարկվելը երբ տեղնիկական և/կամ վարչական հսկողությունները հնարավոր կամ արդյունավետ չեն այդ վտանգները ընդունելի մակարդակի հասցնելու համար: Կարևոր է բացառել աշխատողների աշխատանքային տեղամասերում վտանգների ենթարկվելը, և որոշելու արդյոք նրանց պաշտպանության համար անհրաժեշտ է

ԱՊՆ-ների օգտագործումը: ԱՊՄ-ների տեսակը կախված է աշխատանքի տեսակի և գտնվելու վայրի ռիսկի մանրակրկիտ գնահատումից: ԱՊՄ-ները չեն կարող փոխարինել անվտանգության միջոցների կիրառմանը:

Գլխի պաշտպանական միջոցներ

- *Աշխատողները պետք է կրեն անվտանգության սաղավարտ:*
- *Պարբերաբար ստուգել անվտանգության սաղավարտները փոս ընկած տեղերի, ճաքերի կամ մաշվածության համար:*
- *Եթե անվտանգության սաղավարտը ստացել է ֆիզիկական կամ էլեկտրական հարված այն պետք է փոխարինել՝ նույնիսկ եթե չկան տեսանելի վնասվածքներ:*
- *Անվտանգության սաղավարտները պետք է պահել լավ վիճակում, չի կարելի անցքեր բացել, մաքրել քայքայիչ լվացնող միջոցներով կամ լուծիչներով, ներկել, կամ պահել բարձր ջերմաստիճանային պայմաններում:*

Ոտքի պաշտպանության միջոցներ

- *Աշխատողները պետք է կրեն բարձրորակ, համապատասխան նյութից պատրաստված անվտանգ կոշիկներ կամ երկարաճիտք ոտնամաններ:*
- *Կոշիկներիը/երկարաճիտք կոշիկները պետք է աշխատողների ոտնաչափով լինեն:*
- *Անվտանգության կոշիկները կամ երկարաճիտք կոշիկները պետք է սայթաքուն չլինեն և ունենան պաշտպանիչ կոշկատակ սայթաքելուց և վնասվելուց խուսափելու համար,*
- *Կոշկածայրերը խորհուրդ են տրվում ծանր պտտվող սարքավորումների կամ ընկնող առարկաների հետ աշխատելու ժամանակ ոտքի մատերը ջախջախումից կանխելու համար:*

Ձեռքի պաշտպանության միջոցներ

- *Աշխատողները պետք է կրեն համապատասխան նյութից պատրաստված բարջրորակ անվտանգ ձեռնոցներ:*
- *Ձեռնոցները պետք է աշխատողների չափսով լինեն:*
- *Պետք է կրել աշխատանքին համապատասխան ձեռնոցներ, ինչպիսին են ծանր ռետինե ձեռնոցներ բետոնային աշխատանքի համար, և զոդման ձեռնոցներ զոդման համար:*

Աչքի և դեմքի պաշտպանիչ միջոցներ

- *Աչքի և դեմքի պաշտպանիչ միջոցները նախատեսված են հատուկ վտանգների համար: Զոդման, կտրման, մեխելու /ներառելով պնեվմատիկ մուրճ/կամ բետոնի և/կամ վնասակար քիմիկատների և վտանգավոր նյութերի հետ աշխատելիս, աշխատողները պետք է կրեն անվտանգ ակնոցներ, պաշտպանիչ ակնոցներ կամ դեմքի սաղավարտներ:*
- *Փոխարինել ոչ հարմար կամ վնասված անվտանգության ակնոցները կամ դեմքի սաղավարտները:*

Այլ հատուկ ԱՊՄ-ներ

- *Հատուկ անձնական պաշտպանության միջոցներ պետք է օգտագործել վտանգավոր թափոններ և նյութեր գործածելիս, գազի, գոլորշու, փոշու ազդեցության տակ գտնվող փակ տարածքներում կամ շինհրապարակներում աշխատելիս:*
- *Պաշտպանության միջոցներ*
- *Կապալառուն ապահովում է, որ Շինհրապարակ մուտք գործող բոլոր աշխատակիցները, այցելուները կամ երրորդ կողմերը ունենան Անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ), որոնք համապատասխանում են վերը սահմանված պրակտիկաներին և ստանդարտներին:*

Աշխատանքներ Գետերի և ջրընդունիչների մոտ

Կատարվող աշխատանքերի ընթացակարգը որոշելու համար պետք է ապահովվի մեթոդաբանություն և պահանջվող պաշտպանիչ միջոցառումները:

Բոլոր աշխատողները պետք է ստանան աշխատանքային համակարգի վերաբերյալ հատուկ ցուցումներ, յուրաքանչյուր դեպքի օգտագործման համար: Աշխատողներից պահանջվում է օգտագործել անվտանգության գոտիներ, պետք է տրվի լսողունության օգնության օգտագործման համապատասխան հրահանգավորում և նրանք պետք է վերապատրաստվեն փրկարարական գործողությունների համար:

Պետք է ապահովվի փրկարարական գործողությունների վերապատրաստություն:

Յուրաքանչյուր հերթափոխից առաջ աշխատողներին պետք է տրվի տեղի եղանակի տեսության կանխատեսումները, կանխելու անձրևից, ուժեղ քամիներից, անսպասելի մարախուղից առաջացած վտանգները: Ցցված եզրերի պաշտպանության միջոցները կապահովվեն այնտեղ որտեղ որ անհրաժեշտ է:

Անվտանգության ցանցերը և անվտանգության գոտիները կապահովվեն եթե անհրաժեշտ է: Բավարար փրկարար օղակներ և փրկարար ցանցեր կապահովվեն և կստուգվեն ամեն օր: Արագահոս ջրի առկայության դեպքում կարևորություն կտրվի հոսանքն ի վար անվտանգության մետաղական մալուխի նախապատրաստմանը: Կամրջակներն ու ջրի մոտ գտնվող տարածքները մաքուր կպահվեն խցանումներից:

Ջրին կից պետք է ապահովվի համապատասխան լուսավորություն: Կառավարման դերը աշխատանքային անվտանգ մեթոդ ապահովելն է նախքան աշխատանքը սկսելը:

Կազմակերպության և ֆունկցիոնալ կազմին վերաբերվող օրենքներ

2004թ. Դեկտեմբրի 14 սահմանված Հայաստանի Հանրապետության Աշխատանքային Օրենսգիրքը աշխատանքային անվտանգության և առողջության հիմնական Օրենսդրությունն է: Աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլուխը նվիրված է աշխատանքային առողջության և անվտանգության և աշխատանքային պայմաններին:

Համապատասխան օրենսդրությունը կարող է լինել.

- *Աշխատանքային պետական տեսչության վերաբերյալ օրենք (Text No. 280);*
- *Աշխատանքայի օրենսգիրք (12/2004, վերջին փոփոխությունը կատարվել է 2008);*
- *2003ի հանցագործության վերաբերյալ օրենսգիրք*
- *Հրդեհային անվտանգության վերաբերյալ Հայստանի Հանրապետության ակտ, No. ZR-176, Մայիսի 15, 2001;*
- *Մարդկային իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդությունների կանխմնա վերաբերյալ Հայաստանի հանրապետության ակտ, No. ZR-103, Փետրվարի 15, 1997*
- *Օրենք Աշխատանքային պետական տեսչության վերաբերյալ(03/24/2005);*
- *Օրենք տեխնիկական անվտանգության կանոնակարգ ման վերաբերյալ(10/24/2005);*
- *Օրենք ստուգումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ(05/17/2000).*
- *Հրամանագիր 2390-N մեքենա մեխանիզմի անվտանգության պահանջների համար:*
- *Վճիռ N 291–N անվտանգության կանոններ պայթուցիկ աշխատանքաների ժամանակ*
- *Վճիռ N 1089-N բժշկական հետազոտություններ*
- *Վճիռ N 182-N վտանգավոր նյութերի վերահսկում և դասակարգում*
- *Օրենք անվտանգ տեխնիկական ապահովվման պետական կանոնների գործընթացի վերաբերյալ*
- *Հրամանագիր 1631N կանոններ անձնական անվտանգության միջոցների համար:*

- *Վճիռ N51-N Բաց հանքավայրի հանքաարդյունաբերական կանոններ:*
- *Որոշում N1277-N Տեխնիկական անվտանգ կանոններ հանքաքարի կոտրման, չափման և հարստացման համար:*

Ի հավելումն այս ամենին, հատուկ աշխատանքային վտանգներից աշխատողների պաշտպանության մասին իրավական դրույթներ են պարունակում տարբեր առանձին օրենսդրական ակտեր ինչպիսին են՝ Մարդկային Իմունային Անբավարարության Վիրուսից առաջացած հիվանդությունների կանխման վերաբերյալ ակտ կամ հրդեհային անվտանգության ակտ:
Աշխատանքային տեսուչների գործառությունները, իրավունքները և պարտականությունները սահմանված են Աշխատանքային Պետական Տեսչության Ակտում: Բացի այդ, Հայաստանի քրեական մասին օրենք, աշխատանքային անվտանգության և առողջության օրենքների և կանոնների խաղտման համար ապահովում է տուգանքներ:
Աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածը սահմանում է որ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային Օրենսդրությունը բաղկացած է Սահմանադրությունից, Աշխատանքային Օրենսգրքից, այլ օրենքներից ինչպես նաև Հայստանի Կառավարության վճռից, որը ունի օրենքին հավասար ուժ և պարունակում է աշխատանքային նորմեր, Հայաստանի հանրապետության նախագահի կողմից տրված հրամաններ և ցուցումներ, Հայստանի Կառավարության Վճիռներ և Հայստանի Հանրապետության Վարչապետի վճիռներ:

Պահանջներ Ա/բետոնե ծածկի նկատմամբ

Ա/բետոնե ծածկի իրականացման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ տարածքում ընդունված ԳՕՍ 9128-2013 նորմատիվատեխնիկական պահանջները: Ասֆալտ բետոնե աշխատանքների ժամանակ պետք է առաջնորդվել ԳՈՍ 9128-2013 և ՍՇՀ 123-77 նորմատիվային պահանջներին համաձայն: Ասֆալտապատման աշխատանքները իրականցնելիս Կապալառուն պարտավոր է իրակակցնել բոլոր անհրաժեշտ փորձարկումները, որոնք պահանջված են ՀՀ տարածքում գործող նորմատիվային պահանջներով: Ասֆալտ բետոնե աշխատանքների ժամանակ պետք է ապահովվի ԳՈՍ 9128-2013 նորմատիվային պահանջի աղյուսակ 2-ի և 3-ի պահանջները / ԳՈՍ 9128-2013 կետ 4.1.8/: Ամբողջ ընթացքում առնվազն 2 գլդոն պետք է լինի առկա լինեն, մեկը ինքնաշարժ պնևմատիկ գլդոն, մյուսըէ պողպատե անիվով: Անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է օգտագործի հարկ եղած քանակությամբ գլդոններ, որպեսզի ըստ կարգի և արդյունավետորեն ու անընդհատորեն ապահովի ասֆալտի սահմանված խտությունը և մակերևույթային բնութագրերը: Ասֆալտի խարնուրդը փռելուց անմիջապես հետո պետք է մակերեսի հարթությունը ստուգել և անկանոնությունները վերացնել: Խառնուրդի կպչելը պողպատի անիվով գլդոններին կանխելու համար անիվները պետք է պատշաճ չափով խոնավ պահվեն, սակայն չափից ավել ջուր չի թույլատրվում: Չափից ավել ջուր ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ նոր տեղադրված և խտացման պրոցեսում գտնվող ա/բետոնե պատվածքի մակերևույթի վրա չպետք է լինեն ջրի կուտակումներ, առավել ևս հոսող ջրի հետքեր: Գլդոնների անիվների վրա բացի ջրից չի թույլատրվում բենզին, դիզել, յուղ կամ այլ լուծույթների կիրառումը: Գլդոնումը պետք է սկսել ճանապարհի եզրային երկայնքով և աստիճանաբար շարունակել դեպի կենտրոն: Շրջադարձերի վիրաժի հատվածներում գլդոնումը պետք է սկսել ցածր կետից դեպի վերին կետ: Գլդոնման առանցքը չպետք է կտրուկ փոխվի, իսկ խտացման ուղղությունը շերտի խտացման ժամանակ պետք է լինի նույնը ինչ ձևով որ սկսվել է:
Շերտի ընդումը պետք է կատարվի 3.0մ երկարությամբ չափաձողով: Եթե լայանական կամ երկայնական ուղղություններով լուսային բացվածքը մեծ է 6.0մմ -ը ապա այն համարվում է թերություն և այդ թերությունը պետք է վերացվի Կապալառուի հաշվին Ինժեների և Պատվիրատուի կողմից նշված ժամանակահատվածում: Բացի այն, որ շերտի ընդունման և ստուգման համար պետք է օգտագործել նորմատիվային պահանջով նախատեսված ստանդարտ չափաձողեր, շերտի ընդունման համար պարտադի պայման է նաև նախագծային նիշերի համապատասխնումը: Շերտի /մանրահատիկ և խոշորահատիկ ա/բետոնե շերտեր/ շեղումները պետք է լինեն.

Մանրահատիկ և խոշորահատիկ ±5մմ նախագծի աշխատանքային գծագրերով նախատեսված հաստության նկատմամբ, իսկ գեոդեզիական նիշերը՝ կարմիր նիշեր ±5մմ

ԱՍՖԱԼՏ ԲԵՏՈՆԵ ՊԱՏՎԱԾՔ

Ասֆալտ բետոնե աշխատանքների ժամանակ պետք է առաջնորդվել ԳՈՍ 9128-2013 և ՍՇՀ 123-77 նորմատիվային պահանջներին համաձայն: Ասֆալտապատման աշխատանքները իրականացնելիս Կապալառուն պարտավոր է իրականացնել բոլոր անհրաժեշտ փորձարկումները, որոնք պահանջված են ՀՀ տարածքում գործող նորմատիվային պահանջներով:

Ասֆալտ բետոնե աշխատանքների ժամանակ պետք է ապահովվի ԳՈՍ 9128-2013 նորմատիվային պահանջի աղյուսակ 2-ի և 3-ի պահանջները / ԳՈՍ 9128-2013 կետ 4.1.8 Աղյուսակներ 2 և 3 կցվում են/

Աղյուսակ 2

Խառնուրդի և ասֆալտբետոնի տեսակն ու տիպը	Հատիկի չափը, մմ. Ոչ ավելի										
	40	20	15	10	5	2,5	1,25	0,63	0,315	0,16	0,071
Տիպերի խտությունը	Անընդհատ հատիկային կազմություն / Непрерывные зерновые составы										
А Б	**90-100** **90-100**	66-90 76-90	56-70 68-80	48-62 60-72	**40-50** **50-60**	28-38 38-48	20-28 28-37	**14-20** **20-28**	10-16 14-22	6-12 10-16	**4-10** **6-12**
	Ընդհատուն հատիկային կազմություն / Прерывистые зерновые составы										
А Б Ծակոտկեն	**90-100** **90-100** **90-100**	66-90 76-90 75-100 (90-100)	56-70 68-80 64-100	48-62 60-72 52-88	**40-50** **50-60** **40-60**	28-50 38-60 28-60	20-50 28-60 16-60	**14-50** **20-60** **10-60**	10-28 14-34 8-37	6-16 10-20 5-20	**4-10** **6-12** **2-8**
Խճային բարձր ծակոտկենությամբ	**90-100**	**55-75 (90-100)**	35-64	22-52	**15-40**	10-28	5-16	**3-10**	2-8	1-5	**1-4**
Ավազոտ բարձր ծակոտկենությամբ	**-**	**-**	**-**	**-**	70-100	64-100	41-100	**25-85**	17-72	10-45	**4-10**

Աղյուսակ 3

Խառնուրդի և ասֆալտբետոնի տեսակն ու տիպը	Հատիկի չափը, մմ. Ոչ ավելի									
	20	15	10	5	2.5	1.25	0.63	0.315	0.16	0.071
Տաք										
Բարձր ծակոտկենությամբ	**90-100**	70-100 **(90-100)**	56-100 **(90-100)**	**30-50**	24-50	18-50	**13-50**	12-50	11-28	**10-16**
Տիպերի խտությունը	Անընդհատ հատիկային կազմություն / Непрерывные зерновые составы									
А	**90-100**	75-100 **(90-100)**	62-100 **(90-100)**	**40-50**	28-38	20-28	**14-20**	10-16	6-12	**4-10**
Б	**90-100**	80-100	70-100	**50-60**	38-48	28-37	**20-28**	14-22	10-16	**6-12**
В	**90-100**	85-100	75-100	**60-70**	48-60	37-50	**28-40**	20-30	13-20	**8-14**
Г	-	-	**100**	**70-100**	56-82	42-65	**30-50**	20-36	15-25	**8-16**
Д	-	-	**100**	**70-100**	60-93	42-85	**30-75**	20-55	15-33	**10-16**
	Ընդհատուն հատիկային կազմություն / Прерывистые зерновые составы									
А	**90-100**	75-100	62-100	**40-50**	28-50	20-50	**14-50**	10-28	6-16	**4-10**
Б	**90-100**	80-100	70-100	**50-60**	38-60	28-60	**20-60**	14-34	10-20	**6-12**

Ասֆալտ-բետոնե պատվածքի փորձարկումները պետք է իրականացվի համաձայն ՀՀ տարածքում ընդունված նորմատիվային պահանջների ԳՈՍ 30630.1.1-99:

ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑՆԵՐ

*Մետաղական արգելափակոցները նախատեսվում է իրականացնել համաձան ՀՀՇՆ 32-02-2022 նորմայի պահանջներին համաձայն: Մետաղական արգելափակոցների տիպը ընտրվել է համաձայն ԳՕՍ 26804-2012 նորմատիվային պահանջի 3.3.1, 5.1.1-2րդ պարբերության /0.75մ բարձրությամբ/, կետերի պահանջների համաձայն: Մետաղական արգելափակոցի կանգնակը ընդունվել է **[N14** տիպի կանգնակով /աղյուսակ Բ1 տիպ 11ԴՕ դիմադրողականության մակարդակը Ս2/: Մետաղական արգելափակոցի մետաղական կանգնակները նախատեսված է ընկղմել ճանապարհի կողնակի նիշից -1,100 մ խորությամբ: Մետաղական արգելափակոցները նախատեսվում է նաև ներկել կոնտրաստ գույներով 1:2 հարաբերությամբ՝ համաձայն ԳՕՍ51256-2018 նորմատիվային պահանջի: Մետաղական արգելափակոցների աշխատանքների հսկումը պետք է իրականացնել ԳՕՍ 26804-2012 նորմատիվային պահանջի 5-րդ կետով սահմված պահանջների համաձայն: Տեղադրվող մետաղական արգելափակոցները պետք է ապահովեն 300կՋ հարվածի դիմադրողականությամբ: Դինամիկական շեղումը պետք է լինի 0,75-1,50մ: Երկալիքային մետաղական թիթեղի հաստությունը նախատեսված է 4մմ հաստությամբ՝ համաձայն ԳՕՍ 26804-2012-ի աղյուսակ Բ1-ի:*

Ограждение группы 11ДО. Детали соединения балки со стойкой.



Հարատև երկարությունների դեպքում տեխնիկական խզումները պետք է իրականացնել համաձայն ըստ ներքոբերվածի

Оснащение ограждений группы ДО
при организации технологических разрывов
небольшой протяженности
(служебный проход, пешеходный переход)



Տեխնիկական խզման չափը պետք է լինի ոչ ավել 0.5-0.75մ:

Մետաղական արգելափակոցների վրա տեղադրվող լուսանդրադարձիչները նախատեսվում է սպիտակ և կարմիր գույնով:

Световозвращатель – ЭС-1



Արգելափակոցները կարելի տեղադրել մեքենամեխանիզմի միջոցով /հարվածելով/ կամ նախորոք փորված անցքերի մեջ:

Թույլատրելի շեղումներ.

- *Ուղեփակոցի բարձրության վրա պետք է լինի +/- 20 մմ:*
- *Արտաքին տեսքից ուղեփակոցի գծի համար պետք է լինի +/- 20 մմ:*

- *Ուղղահայաց առանցքից շեղումները ուղեփակոցի վերին մասում (ճանապարհի մակերևույթի ուղղահայաց կամ սովորական դիրքից, ինչպես նպատակահարմար է) պետք է լինեն +/- 20 մմ:*
- *Մետաղական արգելափակոցների W-ձև ստանդարտ հեծանները նախատեսված են մինչև R=50մ շառավիղի համար: Դրանցից փոքր շառավիղների դեպքում մետաղական արգելափակոցները պետք է ունենան գործարանային կորացում և ցինկապատում՝ ըստ նախագծի բացատրական մասով տրված պահանջների:*

Արգելափակոցի հենասյուներ

- *Հենասյուները պետք է տեղադրվեն սյուների համար փորված փոսորակներում և հետլիցք արվեն հատիկավոր նյութով՝ վերջնամշակելով մակերևույթը: Հետլիցքը պետք է խտացվի մինչև 95%-ից MDD (ГОСТ 22733) ոչ պակաս չոր խտության: Սյուները պետք է տեղադրվեն արտադրողի բազրիքների/արգելափակոցների նախագծին համապատասխան՝ հաշվի առնելով Գծագրերում նշված տարածությունը: Լրացուցիչ վճարում չի կատարվելու, եթե թողնված տարածությունը ավելի քիչ լինի, քան Գծագրերում նշված տարածությունն է:*
- *«Արգելափակոցի մատակարարման և տեղադրման համար վճարումը կկատարվի ըստ Ծավալների ամփոփագրում նշված գծամետրի արժեքի: Այդ արժեքը պետք է ներառի արգելափակոցի, պողպատե սյուների և բոլոր աքսեսուարների մատակարարման, սյուների համար փոսորակների փորման և հետլիցքի, ինչպես նաև սրանց հետևանքով առաջ եկած աշխատանքների, ներառյալ՝ եզրային խարսխումների ու անցումային հատվածների ծախսերը:*

Ճանապարհային գծանշում

Համապատասխանությունը, նմուշառումն ու հետազոտությունը պետք է Կապալառուի կողմից իրականացվեն համաձայն հետևյալ ստանդարտների: Նախագծով նախատեսվում է իրականացնել թերմոպլաստիկ տիպի գծանշում: Այն պետք է համապատասխանի ներքոբերված ստանդարտ պահանջներին:

- *ГОСТ 32830-2014, ГОСТ52290-2004, ГОСТ52256-2011 կամ /AASHTO T 250 /– ճանապարհային գծանշման նյութ ապակե գնդիկների օգտագործմամբ:*
- *Լուսանդրադարձման չափանիշները պետք է համապատասխանեն ГОСТ52290-2004-ի և ГОСТ52256-2011 պահանջներին:*

Չափման միավորը

Նկարագրություն	***Միավոր***
ճանապարհային գծանշման նյութ՝ չընդհատվող սպիտակ գծով -100 մմ	*մ2*
ճանապարհային գծանշման նյութ՝ չընդհատվող սպիտակ գծով-150 մմ	*մ2*
ճանապարհային գծանշման՝ չընդհատվող սպիտակ գծով -200 մմ	*մ2*
ճանապարհային գծանշման նյութ՝ընդհատվող սպիտակ գծով -150 մմ	*մ2*
ճանապարհային գծանշման նյութ՝ընդհատվող սպիտակ գծով-150 մմ	*մ2*
ճանապարհային գծանշման նյութ՝ընդհատվող սպիտակ գծով -200մմ	*մ2*

Ճանապարհային գծանշման նյութ՝ ընդհատվող սպիտակ գծով-400 մմ	մ2
Ձևավոր նշագծում	մ2

Սլաքների և ձևավոր գծանշումները չափագրվում են նախագծով նախատեսված չափերի հիման վրա: Չափումները պետք է իրականացնել գծանշման եզրային մասով՝ հաշվի առնելով բոլոր բեկյալները և ջարդման անկյունները:

Ճանապարհային նշաններ

Ճանապարհային նշանների տեղադրումը պետք է համապատասխանի ГОСТ52289-2019 տեխնիկական ցուցանիշներին: Լուսանդրադարձման գործակիցները պետք է համապատասխանեն ГОСТ52290-2004-ի պահանջներին: Ճանապարհի երթևեկության կազմակերպման համար նախատեսված նշանները տեղադրվում են Φ57x3մմ տրամագծով խողովակների վրա: Մետաղական խողովակները պետք է լինի ներկված էմալային ներկով: Երթևեկության կազմակերպման նշանների տեղադիրքը պետք է տեղադրել նորմատիվային պահանջին համապատասխան:

Հատիկավոր հետլիցք

Հատիկավոր նյութով հետլիցքը պետք է տեղադրվի 150 մմ-ը չգերազանցող շերտերով և խտացվի՝ մինչև առավելագույն չոր խտության 95.0%-ը: Յուրաքանչյուր խտացված շերտի համար պետք է իրականացվի ստուգափորձ: Հատիկավոր նյութով հետլիցքը պետք է լցվի և խտացվի խողովակների շուրջը՝ մինչև 500 մմ խողովակի վերին մասի վրա, կամ մինչև հողային պաստառի վերին մասը, որը որ ավելի ցածր կլինի:

Հատիկավոր նյութով հետլիցքը պետք է համաչափ լցվի և խտացվի ուղղանկյուն խողովակների կողքերում՝ մինչև խողովակի վերին սալը կամ հողային պաստառի վերին մասը, որը որ ավելի ցածր կլինի: Նշված մակարդակից վեր հետլիցքը պետք է լինի լիցքի կամ պատվածքի նյութը, ինչպես կիրառելի է: Վճարման համար չափվող հատիկավոր նյութով հետլիցքի ծավալը պետք է հաշվել ըստ այդ նյութի տեղադրված և խտացված ծավալի խորանարդ մետրի համաձայն: Լիցքի նյութի կամ հատիկավոր նյութով հետլիցքի սահմանված մակարդակից վեր տեղադրված պատվածքի նյութի համար վճարումը պետք է կատարվի այդ աշխատատեսակի համար կիրառելի դրույքաչափով՝ անկախ նրանից նյութը լցվում է փոսորակի մեջ, կառուցվածքին կից, թե այլ տեղ: Գրունտի փոխարինման հատվածում քանդման աշխատանքները իրականացնելուց հետո պետք է իրականացնել գոյություն ունեցող հիմնատակի խտացում և հարթեցում: Քարային լիցքի համար նյութը կարող էլ լինել գլաքարային և բազալտե քարերից: Խտացումը պետք է իրականացվի ոչ ավել քան 150մմ հաստությամբ շերտի հաստությամբ: Հիմքի հարթեցումից հետո պետք է իրականացնել գեոդեզիական հանույթ՝ փաստելով արդեն իրականացված հիմքի նիշը, որը պետք է համապատասխանի նախագծով տրված նախագծային նիշին ±50մմ հաստությամբ: Հիմքի խտացման գործակիցը պետք է 0.95, որը պետ է հաստատվի համապատասխան լաբորատոր փորձարկման ակտով: Շերտերի հաստության համար շեղումը պետք է լինի ոչ ավել քան ±30մմ: Նախագծով նախատեսված շեղումները պետք է պահպանվեն խստինս, և առանց համապատասխ գեոդեզիական և խտացման փորձարկման ակտերի շերտի համար վճարում չի կատարվի:

Գրունտի փոխարինման աշխատանքների ժամանակ կպալառուն պետք է ապահովի ժամանակավոր ջրահեռացում: Ժամանակավոր ջրահեռացումը հիմնականում պետք է ապահովի բնական տեղումներից /անձրև և ձյուն/ սպասված ջրերի բնականով հեռացմանը, որը չպետք է խարխլի կամ ջրահագեցնի գոյություն ունեցող հիմքը:

Շինարարական աշխատանքների ժամանա բնակալիմայական տեղումների պատճառով հիմքի թուլացած հատվածները /սպունգային էֆեկտով/ անհրաժեշտ է փոխարինել և այդ հատվածից կամ հատվածներից գրունտի փոխարինումը պետք է կատարվել Կապալառուի հաշվին:

ԽՏԱՑՈՒՄ

Կոպճային կամ խճավազային նախապատրաստական շերտի խտացումը կարող է իրականացվել մակերևութային թրթռիչներով, հարթ գրունտային գլդոններով 15տ և ավել քաշով, մեխանիկական տոփանիչներով կամ այլ համապատասխան սարքավորումներով՝ հաստատված Ինժեների կողմից:

Այնտեղ, որտեղ նախապատրաստական շերտի խտացումն իրականացվում է ձեռքով կամ մեխանիկական տոփանմամբ, նյութը պետք է տեղադրված լինի հորիզոնական շերտերով՝ խտացումից հետո ոչ ավել, քան 150 մմ հաստությամբ: Եթե խտացումն իրականացվում է մակերևութային թրթռիչներով կամ նմանատիպ սարքավորումներով, նյութը կարող է տեղադրվել խտացումից հետո ոչ ավել, քան 300 մմ հաստության շերտերով:

Կոպճային նյութի խտացման ժամանակ նյութը պետք է ամբողջովին ջրվի/խոնավացվի խտացվող ամբողջ շերտով մեկ: Նախապատրաստական շերտի ծավալի չափումը վճարման համար կկատարվի տեղադրված և խտացված կոպճային նյութի խորանարդ մետրով:

Հատիկավոր նյութից ենթահիմք և կողնակներ

Կողնակների խտացման փորձարկումները պետք է իրականացնել համաձայն GOUS 22733-ի պահանջների:

Մուտք դեպի շին հրապարակ

Տեղամասի դասավորվածություն

- *Պլանավորել արտակարգ իրավիճակների համար ուղիներ և մուտքեր, երթևեկության համար ճանապարհներ, վտանգավոր տարածքներ, փրկարար ուղիներ և այլն*
- *Ապահովել անվտանգ սարքավորումներ, ուշադրություն դարձնելով համապատասխանության, ընտրության, անվտանգ առանձնահատկությունների, անվտանգ օգտագործման, վերապատրաստման և իրազեկման, ստուգման և սպասարկման վրա*
- *Ապահովել համապատասխան անվտանգության և զգուշացնող նշաններ*

Տեղամասի անվտանգություն

- *Կառուցել համապատասխան ցանկապատում*
- *Վրահսկել տեղամասի մուտքը*
- *Վստահ լինել որ համապատասխան նշանները և լուսավորությունը տեղում են երբ կա հասարակական մուտքի կամ կողքով անցնելու հավանականություն*
- *Ուղիները և հետիոտնային ճանապարհները պահել մաքուր և առանց բեկորների*
- *Ստեղծել երթևեկության վերահսկման ընթացակարգեր*
- *Վստահ լինել որ հեղեղի նախազգուշացման համակարգը և տեղամասի տարհանման պլանը հասանելի է*

Երթևեկության և հետիոտնի մուտքի/շարժի կազմակերպում

- *Եթե հնարավոր է, խուսափել հետադարձ կատարելուց ըստ հատակագծի դիզայնի*
- *Օգտագործել անվտանգ աշխատանքային համակարգ հետադարձի համար*
- *Ապահովել անվտանգ աշխատանքային համակարգ բեռնող և բեռանաթափող մեքենաների համար*
- *Հնարավորության դեպքում ներկայացնել միակողմանի երթևեկության համակարգ, դիմային բախման ռիսկերը նվազեցնելու համար*
- *Ստուգել ճանապարհների հատակագիծը վստահ լինելու որ դրանք համապատասխան են մեքենաների և հետիոտների շարժի համար*
- *Ստուգել երթևեկության ճանապարհները վստահ լինելու որ դրանք համապատասխանում են տվյալ ճանապարհը օգտագործող մեքենաների տեսակներին և հոսքին:*
- *Անհրաժեշտության դեպքում տեղադրել ուղղության, արագության սահմանափակման և առաջնային նշաններ*

- *Փակ անկյուններում ապահովել հայելիներ*
- *Կիրառել համապատասխան արագության սահմանափակման ֆիզիկական միջոցներ, ինչպիսին են արագության թմբիկները*
- *Վստահ լինել որ բոլոր մեքենաները ինչպես հարկն է սպասարկվում և կանոնավորապես ստուգվում են*
- *Հնարավորության դեպքում առանձնացնել հետիոտնի և երթևեկության ճանապարհները*
- *Պահել բոլոր տեղամասային և մուտքային ճանապարհների մակերեսները լավ վիճակում*
- *Պահել բոլոր անցուղիները լավ վիճակում և անհրաժեշտության դեպքում ապահովել համապատասխան լուսավորություն*
- *Հեռացնել խոչընդոտները կամ վստահ լինել որ դրանք հստակ տեսանելի են:*

Խնամք

- *Շինհրապարակները պահել աղբից և խցանումներից մաքուր*
- *Վստահ լինել որ բացվածքները ծածկված են կամ ցանկապատված*
- *Պահել բոլոր մակերեսները անվտանգ, հարմար և սայթաքելու վտանգներից զերծ*
- *Վստահ լինել որ շինարարական նյութերը ինչպես հարկն է հավաքված և անվտանգ պահեստավորված են*
- *Պահպանել աշխատողների մուտքը աշխատանքային տեղամասեր*
- *Ոտքի ոլորվելը և սայթաքելը կանխելու համար բոլոր քայլուղիները և սանդուղքները պահել մաքուր բեկորներից և այլն նյութերից, ինչպիսին են՝ փաթեթավորված թափոնները, արկղերը, փայտե կտորները, մանրախիճը, յուղի ատրահոսքը, գործիքները, և այլն: Բեկորները և նյութերը տեղադրել սահմանված վայրերում,*
- *Ապահովել համապատասխան լուսավորություն միջադեպերից խուսափելու համար:*
- *Նյութերի հավաքում*
- *Ապահովել համապատասխան բարձրություն և ճիշտ հավաքում*
- *Հատկացնել բավարար տարածություն պաշարների համար*
- *Կույտերի և դարակների շուրջ գտնվող մակերեսները պահել մաքուր*
- *Ավելի ծանր իրերը պահել ցածր մակարդակի վրա առարկաների անկման վտանգից խուսափելու համար*
- *Խուսափել սուր ծայրերից և բարձր դարակների մուտքի համար ապահովել անվտանգ միջոցներ*
- *Աստիճանների և սանդուղքների պահպանում*
- *Փոխարինել կամ հեռացնել մաշված կամ կոտրված աստիճանները*
- *Պահպանել բազրիք և ճաղավանդակ լավ վիճակում և անհրաժեշտության դեպքում վերանորոգել*
- *Աստիճանները և սանդուղքները պահել մաքուր բեկորներից և ատրանետումներից*
- *Պահպանել համապատասխան լուսավորություն*
- *Անհրաժեշտության դեպքում ապահովել ոչ սայթաքում միջոց*
- *Ապահովել հրդեհի կանխարգելման միջոցներ*
- *Վստահ լինել որ բոլոր կրակմարիչները և հակարդեհային սարքավորումները սպասարկվում և նշվում են:*
- *Արտակարգ իրավիճակների դեպքում կրակմարիչները պետք է պահել հեշտ է գտնվող և հասանելի վայրերում:*
- *Սահմանափակել ծխացող/բաց կրակը*
- *Հաստատել պահեստային ընթացակարգեր հրավտանգ նյութերի համար*

- Պետք է խուսափել շինհրապարակներում չափից շատ հրավտանգ նյութերի պահեստավորումից, արգելել ընդհանուր տարածքներում, սանդուղքների կամ մոտակա ելքերի մոտ հրավտանգ կամ պայթյունավտանգ նյութերի պահեստավորումը:
- Բենզինը և այլ հրավտանգ նյութերը պետք է պահեստավորել օդափոխվող վայրում կամ անանցանելի հարկերով թույլատրված պահեստային հաստատությունում
- Վստահ լինել որ հրավտանգ կամ պայթյունավտանգ նյութերի արտահոսքերը կամ արտանետումները ինչպես հարկն է մաքրվում են:
- Արգելել ներկի, լուծիչների կամ այլ տեսակի հրավտանգ նյութերի ցողելը վատ օդափոխվող տարածքներում, թանձր ծխի կամ գոլորշու կուտակումից խուսափելու համար, որը կարող ա պայթյունի կամ հրդեհի պատճառ դառնալ:
- Ապահովել ատրակարգ իրավիճակների ընթացակարգի փաստաթղթավորումը և ներկայացումը:
- Անձնակազմին վերապատրաստել թե ինչպես գործեն արտակարգ իրավիճակների դեպքում:
- Ցուցադրել վթարային ելքերի և արտակարգ իրավիճակների հեռախոսահամարները:
- Համապատասխան բարեկարգման և սանհանգույցային հարմարությունների ապահովում

1. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շինարարության արտադրության կազմակերպումը պետք է իրականացնել համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 շինարարական նորմերի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Շինարարական արտադրության կազմակերպման նպատակն է՝ կազմակերպչական, տեխնիկական և տեխնոլոգիական նպատակաուղղված համալիր միջոցառումների կիրառման արդյունքում ապահովել՝ սահմանված ժամկետում և պատշաճ որակով օբյեկտի շահագործումը:

Շինարարական արտադրության կազմակերպումն ապահովում է՝

1) օբյեկտի շինարարության բոլոր մասնակիցների համաձայնեցված աշխատանքը՝ Պատվիրատուի (գլխավոր կապալառուի) հետ իրենց գործունեության համակարգմամբ,

2) նյութական ռեսուրսների համալիր մատակարարումը՝ օրացուցային գրաֆիկներով նախատեսված ժամկետներում,

3) շինարարական, մոնտաժային ու հատուկ շինարարական աշխատանքների կատարումը տեխնոլոգիական հաջորդականության պահպանմամբ և տեխնիկապես հիմնավորված համատեղմամբ,

4) անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը,

5) շրջակա միջավայրի պահպանության պահանջների ապահովումը:

2. Յուրաքանչյուր օբյեկտի շինարարությունն անհրաժեշտ է իրականացնել շինարարության կազմակերպման և աշխատանքների իրականացման տեխնոլոգիաների վերաբերյալ նախօրոք ընդունված լուծումների հիման վրա, որոնք պետք է մշակված լինեն շինարարության կազմակերպման նախագծում և աշխատանքների կատարման նախագծում: Շինարարության կազմակերպման նախագծի և աշխատանքների կատարման նախագծի կազմն ու բովանդակությունը պայմանավորված են շինարարության բարդության աստիճանով՝ համապատասխան սույն նորմերի

3. Մինչև շինարարության սկիզբը՝ անհրաժեշտ է շինարարության կատարման նախագծի լուծումներին համապատասխան իրականացնել տեղում շինարարական հրապարակի (ուղեգծի) հատկացումը, շինարարական հրապարակի անհրաժեշտ ցանկապատումը (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային), երկրաբաշխական նշահարման հիմքի ստեղծումը, մոտեցման ճանապարհների կառուցումը, պահեստային տնտեսության ստեղծումը և շինարարության կարիքների համար անհրաժեշտ ծավալի կենցաղային նշանակության ու կոմունալ տնտեսության շինությունների նախապատրաստումը՝ հաշվի առնելով գոյություն ունեցող շենքերի ու շինությունների այդ նպատակների համար ժամանակավոր օգտագործման հնարավորությունը:

4. Մինչև շինարարության սկիզբը՝ անհրաժեշտ է հասարակությանն իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակի ցանկապատի /այդ թվում

ճանապարհաշինական աշխատանքների ուղեգծի/ կամ մեկ այլ առավել տեսանելի տեղամասում տեղադրել պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալները /անվանում, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար/, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների մասին տեղեկատվություն պարունակող վահանակներ, մինչև ավարտված շինարարության փաստագրումը դրանք պահպանելու պայմանով:

5. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ կապալառուն պետք է օբյեկտի սկզբում և վերջում տեղադրի համապատասխան տեղեկատվական նշաններ:

6. Շինհրապարակը պետք է կահավորված լինի հակահրդեհային միջոցներով և բժշկական առաջին օգնության պարագաներով: Գիշերային պայմաններում շինարարական աշխատանքների իրականացման դեպքում կապալառուն պետք է ապահովի շինհրապարակի և աշխատանքների կատարման վայրի համապատասխան լուսավորությունը:

7. Աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ ապահովվի մարդկանց անվտանգությունն ու հարմարությունը և պաշտպանի տեղամասին մոտ եղած բնակիչներին և նրանց ունեցվածքը: Պետք է ապահովել հանրային երթևեկությունը նորոգվող տեղամասի հարակից ու տեղամասի սահմաններում գտնվող ճանապարհների վրա՝ մինչև աշխատանքն ընդունվի: Կապալառուն պետք է համագործակցի տեղի ճանապարհային ոստիկանության հետ և ձեռք բերի երթևեկության կազմակերպման պլանի իրականացման համար պահանջվող բոլոր թույլտվությունները:

8. Շինարարական աշխատանքների ընթացքում պետք է ապահովել մուտքեր՝ իջատեղերի, ճանապարհների, փողոցների, ձեռնարկությունների տարածքների, կայանատեղերի, բնակելի վայրերի, ավտոտնակների և այլ օբյեկտների համար, երթևեկելի մասից հեռացնել հողի կուտակումներն ու այլ նյութերը:

9. Շինարարական աշխատանքների ընթացքում, երբ ճանապարհը բաց է հանրային երթևեկության համար, շինարարական գործողությունները անհրաժեշտ է սահմանափակել.

- պետք է ապահովել առնվազն 3,5 մ լայնությամբ երթևեկության գոտիներ

- կայանատեղերը պետք է տեղադրել երթևեկելի գոտուց առնվազն 4 մ հեռու կամ երթևեկության հաստատված արգելապատնեշներից այն կողմ,

- սարքավորումները պետք է բանեցնել երթևեկության ուղղությամբ, եթե դա գործնականում կիրառելի է,

- կից երթևեկության գոտիների շինարարությունը պետք է ավարտել նույն օրը, նույն մակարդակի վրա, բացի այն դեպքերից, երբ անկումները գերազանցում են 75 մմ-ը և բարձրություններն ունեն 1:3 հարաբերություն: Այն դեպքերում, երբ կից գոտիների անկումները գերազանցում են 75 մմ-ը և բարձրություններն ունեն 1:3 հարաբերություն՝ աշխատանքը կարող է թողնվել հաջորդ օրվան: Տվյալ դեպքում գիշերվա համար պետք է տեղադրել «Անհարթ ծածկ» զգուշացնող նշաններ, լուսաազդանշանային առկայծող լապտերներ և լուսանդրադարձնող ժապավեններով ամրացված արգելափակոցներ:

Շինարարական արտադրության նախապատրաստում

10. Օբյեկտի շինարարության նախապատրաստումը պետք է նախատեսի ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի (ներառյալ գործող կազմակերպության վերակառուցման դեպքում կոնստրուկցիաների տեխնիկական հետազննության արդյունքների փաստաթղթերի) ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազնին ծանոթություն, արտահրապարակային ու ներհրապարակային նախապատրաստական աշխատանքներ, շենքերի, շինությունների և նրանց մասերի կառուցման, ինչպես նաև անմիջական նախապատրաստական փուլի աշխատանքների իրականացման նախագծերի մշակում՝ հաշվի առնելով բնապահպանական անվտանգության պահանջները:

11. Յուրաքանչյուր շինարարական օբյեկտում անհրաժեշտ է՝

1) լրացնել աշխատանքների վարման մատյան,

2) կազմել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր,

3) անհրաժեշտության դեպքում ձևակերպել այլ շինարարական նորմերով և կանոններով նախատեսված լրացուցիչ կատարողական փաստաթղթեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կապալառուն շինարարության և դրա հետ կապված աշխատանքներ իրականացնելիս պարտավոր է կատարել շրջակա միջավայրի պահպանության և շինարարական աշխատանքների անվտանգության վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

2. Կապալառուն աշխատանքներ իրականացնելիս իրավունք չունի օգտագործել Պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումները կամ կատարել նրա ցուցումները, եթե դրանք կարող են հանգեցնել կողմերի համար՝ շրջակա միջավայրի պահպանությանն ու շինարարական աշխատանքների անվտանգությանն ուղղված պահանջների խախտմանը (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 749):

3. Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ գրունտից և շին.աղբից՝ բեռնումով և տեղափոխումով լցակույտ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պետք է պահպանվեն շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվում հրահանգավորում:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգավորման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շրջակա միջավայրի պաշտպանություն և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար պետք է հաշվի առնել ՀՀՇՆ 30-01-2014 դրույթները:

2. Շինարարական արտադրության կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ և աշխատանքներ, որոնք պետք է ընդգրկեն. շինարարության ընթացքում խախտված հողերի վերակուլտիվացում (ռեկուլտիվացում), բնական ռեսուրսների կորստի կանխում, հողեր, ջրավազաններ ու մթնոլորտ վնասակար արտանետումների կանխում կամ մաքրում: Նշված միջոցառումները և աշխատանքները պետք է նախատեսված լինեն նախագծային փաստաթղթերում:

3. Շինարարության ընթացքում ծառաթփուտային բուսականության հատումը և արմատների վզիկների և աճող ծառերի բների հողալցումն իրականացվում են միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված հիմնավորմամբ:

4. Շինարարության ընթացքում շինարարական հրապարակից անմիջապես ջրի բացթողումը դեպի թեքվածքներ իրականացվում է տարածքների ողողումը բացառող՝ նախօրոք պաշտպանական միջոցառումների ապահովմամբ:

Համահարթեցման աշխատանքների իրականացման ժամանակ հետագա օգտագործմանը պիտանի հողային շերտը պետք է նախօրոք հանվի և պահեստավորվի հատուկ առանձնացված տեղամասերում:

5. Ժամանակավոր ավտոմոբիլային ճանապարհները և մոտեցման այլ ուղիները պետք է կառուցվեն՝ հաշվի առնելով գյուղատնտեսական հողահանդակներին ու ծառաթփուտային բուսականությանը հասցվող վնասի կանխարգելման պահանջները:

6. Շինարարություն իրականացվող տարածքներում շինմոնտաժային աշխատանքների կատարման ժամանակ պետք է պահպանվեն օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները:

7. Հորատման աշխատանքների կատարման ընթացքում հասնելով ջրատար (ջրապարունակ) հորիզոններին անհրաժեշտ է ստորգետնյա ջրերի անկազմակերպ հոսքը կանխելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Թույլ բնահողերի արհեստական ամրացման աշխատանքների կատարման ժամանակ պետք է ղեկավարվել ստորգետնյա ջրերի աղտոտումը կանխող, նախագծով նախատեսված միջոցառումներով:

8. Շինարարական հրապարակում գոյացած արտադրական ու կենցաղային հոսքը (աղբը) պետք է մաքրվի և վնասազերծվի շինարարության կազմակերպման և աշխատանքների իրականացման նախագծերում նախատեսված լուծումներին համապատասխան:

- շինմոնտաժային աշխատանքների կատարման ժամանակ պահպանել օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները,

- բանվորներին ապահովել անհատական պաշտպանական միջոցներով (հատուկ արտհագուստ, կոշիկ)

- շինարարական հրապարակում գոյացած արտադրական ու կենցաղային աղբը մաքրել, վնասազերծել և փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով հատուկ սահմանված երթուղիներով տեղափոխել դրանց հեռացման համար նախապես հատկացված վայրեր,

- շինարարական նյութերի և կոնստրուկցիաների փոխադրումը դեպի շինարարական հրապարակ և շինարարական հրապարակից դուրս իրականացնել հատուկ սահմանված երթուղիներով՝ փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

9. Բնակավայրերի տարածքներում անհրաժեշտ է ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնածին ծագման գործոններին շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները:

10. Ընդերքօգտագործողը պետք է ապահովի բնության և շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, այդ թվում մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը, արդյունաբերական թափոնների օգտագործման, օգտահանման, չեզոքացման և նվազեցման աշխատանքների, միջոցառումների կատարում

11. Ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների շենքերի, շինությունների տեղադրումը արգելվում է.

1) արգելավայրերի, արգելոցների, բուսաբանական այգիների, դենդրոլոգիական պարկերի հողերի վրա և ջրապաշտպան գոտիներում,

2) քաղաքների կանաչ գոտիներում, քաղաքային անտառների տարածքներում,

3) ջրամատակարարման համար նախատեսված աղբյուրների սանիտարական առաջին գոտում, ջրամատակարարման կառուցվածքների հարթակների վրա,

4) այն տեղամասերի վրա, որոնց հողաշերտի, գրունտների աղտոտվածության մակարդակը գերազանցում է սահմանված նորմերը՝ անվտանգության և էկոլոգիական հնարավոր հետևանքների առաջացման պահանջներով,

5) հիդրոօդերևութաբանական կայանների պահպանման գոտում,

6) լեռնաարդյունահանող և լեռնավերամշակող օբյեկտների թափոնների շրջանում, սահքերի, սահքավտանգ տեղամասերի, հեղեղների և ձնահյուսերի շրջանում,

7) ինժեներական պաշտպանության կառուցվածքներ չունեցող հնարավոր ջրածածկման գոտիներում (1.5 մ և ավելի խորությամբ),

8) մայրուղային նյութատար խողովակաշարերի պահպանման գոտիներում:

9) շինարարության ընթացքում խախտված հողերը ռեկուլտիվացնել, կանխել բնական ռեսուրսների կորուստները, վնասակար արտանետումները հողեր, ջրավազաններ ու մթնոլորտ

3. Հակահրդեհային միջոցառումներ

Նախագծման ընթացքում հաշվի են առնվել ՀՀՇՆ 21-01-2014 «Հակահրդեհային միջոցառումներ» նորմերի պահանջները և «Հրդեհային անվտանգության կանոնները» համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի N 263-Ն հրամանի:

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները և քաղաքացիները ղեկավարվում են «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոններով և հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել.

1. համապատասխան գործող նորմերով մշակված և սահմանված կարգով հաստատված նախագծով նախատեսված հակահրդեհային միջոցառումների առաջնային կատարումը,

2. գործող նորմերով նախատեսված հակահրդեհային կանոնների պահպանումը և կառուցվող օժանդակ օբյեկտների հրդեհից պահպանումը, շինարարական և մոնտաժային աշխատանքների հրդեհաանվտանգ իրագործումը,

3. հրդեհի դեմ պայքարի միջոցների առկայությունը և դրանց սարքին վիճակում պահպանությունը,

4. կառուցվող օբյեկտում և շինարարական հրապարակում հրդեհի դեպքում մարդկանց անվտանգ տարահանման և փրկելու, ինչպես նաև նյութական արժեքների պահպանման հնարավորությունը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3). Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և

պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 874 300** (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: **Ընդ որում, մատուցված ծառայությունների համար վճարման 70 /յոթանասուն/ տոկոսը կկատարվի հանձման ընդունման արձանագրության ստորագրումից 30 օրվա ընթացքում, իսկ մյուս 30 /երեսուն/ տոկոսը կվճարվի դրական փորձագիտական եզրակացության առկայության դեպքում:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում հիմնական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացությունը: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում:

Եթե նախագիծը վերադարձվում է լրամշակման, որից հետևում է, որ նախագիծը ենթակա է լրամշակման ըստ եզրակացությունում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, որից հետո ճշտված և լրամշակված նախագծային փաստաթղթերի մասով այն պատվիրատուի կողմից ներկայացվում է կրկնակի փորձաքննության: Նախագծման ծառայություններ մատուցող ընկերությունը պարտավոր է պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում լրամշակել նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ պայմանագրով ստանձած պարտավորությունների շրջանակում: Սույն դրույթի խախտումը կարող է ևս պատճառ հանդիսանալ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

7.15 Նախնական փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից կրկնակի փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության ծագման դեպքում՝ կրկնակի, լրացուցիչ /նախագծերի փոփոխության կամ լրամշակման անհրաժեշտության առաջացման ցանկացած դեպքում/ փորձաքննության իրականացնելու համար անհրաժեշտ գումարը վճարում է նախագծման ծառայություն մատուցող ընկերությունը, ընդ որում նախագծերի կրկնակի, լրացուցիչ փորձաքննությունները իրականացվելու է նախնական փորձաքննություն իրականացրած կազմակերպության կողմից:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011005718 ՀՎՀՀ 02815457 Գլխավոր քարտուղար՝ Ա. Երիցյան	«Պռոլաբ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 27, բն. 27 «Արդշինբանկ» ՓԲԸ ՀՀ 2471203042300000, ՀՎՀՀ 00216582 Տնօրեն՝ Ս. Միրզոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » « » 2025 թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/3Ն-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
3	71241200/503	Ստորև	դրամ	**1 029 600**	1	ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3	Ստորև
5	71241200/505	Ստորև	դրամ	**1 844 700**	1	ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3	Ստորև

ՁԱՓԱԲԱԺԻՆ 3
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Տ-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (Տ-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

Ծրագրի անվանումը	Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայությունների անվանումը	Տ-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (Տ-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ
Ճանապարհահատվածի անվանումը	Տ-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (Տ-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհ
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ռիսկայնության աստիճանը	Միջինից բարձր (III կատեգորիա)՝ համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման
Երթևեկամասերի ծածկի տեսակը	Ա/բետոն
Ընդհանուր դրույթներ	• Յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն **հայերեն և ռուսերեն լեզուներով**՝ հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով GHEA GRAPALAT հայերեն տառատեսակով): • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:

Հիմնական պարտականություններ և պահանջներ	*Հիմնական պարտականություններ՝* • Ինժեներական հետազննման աշխատանքների իրականացում: • Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: • Ճանապարհահատվածի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգտնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագիծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում: • Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում ՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով: *Հետազննման վերաբերյալ պահանջներ՝* • Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով, • հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող ճանապարհահատվածի առկա վիճակի տեսանկարահանում: *Նախագծերի նկատմամբ պահանջներ* • Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին: • Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝ ✓ հողային պաստառի վերականգնում / վերակառուցում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ հենապատերի վերականգնում / վերակառուցում / Նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ մայթերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / Նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ ճանապարհի կահավորում, ✓ անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում: **Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝** • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝ ✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման

	համար պահանջվող մեքենա - մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը), ✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ), ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակից տարրերից), ✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը), ✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն), ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կամրջի կոնստրուկտիվ տարրերի նորոգման՝ ըստ աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր), ✓ համահավաք ամփոփագրեր, ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 30%), ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ): ***Համաձայնեցումներ՝*** • նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ, • համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ, • տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը, • կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:
Նորմատիվային պահանջներ	• Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:

	• Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն: • Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն: • Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ», ՀՀՇՆ 32-03.02-2024 «Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում, Հիմնական դրույթներ» շինարարական նորմերերի, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն: • Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն և 26.10.2006 թիվ 1699-Ն որոշումներով սահմանված կարգերի համաձայն: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 17.10.2024թ.-ի թիվ 1656-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: • Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-99, ГОСТ 21.501-2018 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:
Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	***ավարտը***
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման ավարտը՝ 60 օրացույցային օրից, հաշված պայմանագրով նախատեսված ծառայությունների մեկնարկի օրվանից

ՀԱՎԵԼՎԱԾ 5
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

S-2-35, /S-2-32/ (Վերին Արտաշատ) - Այգեպատ (S-2-42) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ	
Ծրագրի անվանումը	Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայությունների անվանումը	S-2-35, /S-2-32/ (Վերին Արտաշատ) - Այգեպատ (S-2-42) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ
Ճանապարհահատվածի անվանումը	S-2-35, /S-2-32/ (Վերին Արտաշատ) - Այգեպատ (S-2-42) մարզային նշանակության ավտոճանապարհ
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ռիսկայնության աստիճանը	Միջինից բարձր (III կատեգորիա)՝ համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման
Երթևեկամասերի ծածկի տեսակը	Ա/բետոն

Ընդհանուր դրույթներ	• Յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն **հայերեն և ռուսերեն լեզուներով՝** հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով GHEA GRAPALAT հայերեն տառատեսակով): • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	***Հիմնական պարտականություններ՝*** • Ինժեներական հետազննման աշխատանքների իրականացում: • Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: • Ճանապարհահատվածի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգտնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագիծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում: • Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով: ***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*** • Ինժեներական հետազննում իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով. • հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող ճանապարհահատվածի առկա վիճակի տեսանկարահանում: ***Նախագծերի նկատմամբ պահանջներ*** • Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին: • Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները ✓ հողային պաստառի վերականգնում / վերակառուցում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ հենապատերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ մայթերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության), ✓ ճանապարհի կահավորում, ✓ անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում: **Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝** • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի

N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝

- ✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա - մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),
- ✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),
- ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակից տարրերից),
- ✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),
- ✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն),
- ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կամրջի կոնստրուկտիվ տարրերի նորոգման՝ ըստ աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),
- ✓ համահավաք ամփոփագրեր,
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ):

Համաձայնեցումներ՝

- նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,

	• համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ, • տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը, • կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:
Նորմատիվային պահանջներ	• Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն: • Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն: • Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն: • Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ», ՀՀՇՆ 32-03.02-2024 «Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում, Հիմնական դրույթներ» շինարարական նորմերերի, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն: • Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն և 26.10.2006 թիվ 1699-Ն որոշումներով սահմանված կարգերի համաձայն: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 17.10.2024թ.-ի թիվ 1656-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: • Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-99, ГОСТ 21.501-2018 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	*ավարտը*
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման ավարտը՝ 70 օրացույցային օրից, հաշված պայմանագրով նախատեսված ծառայությունների մեկնարկի օրվանից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011005718
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր տնօրեն
Ե. Երիցյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Պռոլաբ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 27, բն. 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2471203042300000
ՀՎՀՀ 00216582
Տնօրեն Ս. Վիրաբյան

/ստորագրություն/

Հավելված N 2
«16» «04» 2025 թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/3Ն-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների. այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	71241200/503	S-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (S-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
5	71241200/505	S-2-35, /S-2-32/ (Վերին Արտաշատ) - Այգեպատ (S-2-42) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011005718
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Պռոլաբ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 27, բն. 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2471203042300000
ՀՎՀՀ 00216582
Տնօրեն՝ Ս. Միրզոյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2.1
«16» «04» 2025 թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/3Ն-2 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆԸ

ՁԱՓԱԲԱԺԻՆ 3

/ՀՀ դրամ/

Չափ. համարը	Գնման առարկայի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
1	2	3	4	5	6
3	S-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (S-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ	դրամ	1	1 029 600	**1 029 600**

ՁԱՓԱԲԱԺԻՆ 5

/ՀՀ դրամ/

Չափ. համարը	Գնման առարկայի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
1	2	3	4	5	6
5	S-2-35, /S-2-32/ (Վերին Արտաշատ) - Այգեպատ (S-2-42) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ	դրամ	1	1 844 700	**1 844 700**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011005718
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր բաղադրիչների ղեկավար
Ա. Երիցյան

ԿԱՏԱՐՈՂ

«Պռուաք» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 27, բն. 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2471203042300000
ՀՎՀՀ 00216582
Տիգրան Ս. Մելոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3.1
« » « » 2025 թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/3Ն-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց
	հայտը նախաձեռնող ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

Ծառայությունների մատուցման պայմանագիր 2025թ. N Ա-28/1

ք.Երևան 19.05.2025թ.

«ՊՌՈԼԱԲ» ՍՊԸ –ն այսուհետ՝ **"Պատվիրատու"** ի դեմս տնօրեն՝ Ս. Միրզոյանի, մի կողմից, ղեկավարվելով պատվիրատուի կանոնադրությամբ և **«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ** այսուհետ **"Կատարող"** ի դեմս տնօրեն Հ. Տիտիզյանի մյուս կողմից, կնքում են ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Տ-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (Տ-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տարածքում իրականացնել ինժեներաերկրաբանական հետազոտություն, գրունտների լաբորատոր հետազոտություն,որոնք պետք է համապատասխանեն ծառայության մատուցման պահին ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:***

ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 1.2 կետի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1,1 կետով նշված ծառայության բնութագիր և ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 4.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1.1 կետի սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 **Պատվիրատուն պարտավորվում է՝**

- հնարավորինս օպերատիվ ձևով տրամադրել Կատարողին ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, ինչպես նաև բոլոր առկա և հասանելի փաստաթղթերը, ինչը թույլ կտա Կատարողին մատուցելու վերը նշված ծառայությունները:
- աշխատանքներն իրականացնելիս Կատարողին տրամադրել լիիրավ համագործակցություն և աջակցություն:
- ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև

պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, նաև պայմանագրի 4.5 կետով նախատեսված տույժը::

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1.2 կետով սահմանված ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Ծառայությունների տրամադրման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները չքննարկել կամ այլ կերպ չտրամադրել երրորդ կողմերին՝ առանց Պատվիրատուի թույլտվության, բացի օրենքով սահմանված դեպքերի:

2.4.3 Ծառայությունը մատուցելու ամբողջ ժամկետում ունենա ՀՀ-ում գործող օրենսդրությամբ պահանջվող գործող լիցենզիաները:

3. Վճարման չափը և կարգը

3.1 Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

3.2 Պայմանագրով նշված աշխատանքների վճարումը իրականացվում է կատարված աշխատանքի համար ներկայացված հանձման –ընդունման ակտով :

3.3 Պայմանագրի ներքո սահմանված ծառայությունների բոլոր արժեքները ներառում եմ կիրառման ենթակա հարկերը (ԱԱՀ) :

3.4 Նշված արժեքը Պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքների ամբողջական կատարման միասնական արժեք է:

3.5 Պատվիրատուն պարտավորվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում հաստատել կատարողական ակտը կամ գրավոր տեղեկացնել Կատարողին հայտնաբերված թերությունների մասին:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

4.2 Պայմանագրի N 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

4.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու կամ 2.4.4 կետի պահանջը չբավարարելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

4.4 Պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

4.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

4.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ

ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործում է մինչև 20.06.2025թ.

5.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

5.3 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

5.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

